ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ ՊԱՏԿԵՐԻ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Ուսուցչուհի՝ Նելլի Սևոյան

/«Գյումրու թիվ 37 ավագ դպրոց» ՊՈԱԿ/

Գյումրի 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... էջ 3

ԳԼՈՒԽ I

ԳՐՈՂԸ՝ ԻՆՉՊԵՍ ՈՐ ԿԱ. ԲԱԿՈՒՆՑԻ ԱՇԽԱՐՀՆ ՈՒ ԱՐՎԵՍՏԸ .....…էջ 5

ԳԼՈՒԽ I I

ՊԱՏԿԵՐԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ԲԱԿՈՒՆՑԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ .....…էջ 13

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ..... էջ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... էջ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գրական աշխարհը մի ասպարեզ է, ուր ժամանակի ընթացքում մուտք են գործում եզակի տաղանդներ՝ իրենց ասելիքն ասելու, իրենց բաժին հասած առաքելությունը կատարելու։Այդ տաղանդներից ամեն մեկը մի մոլորակ է, մի պայծառ լուսատու, ովքեր իրենց մտքի ու տաղանդի լույսով լուսավորում են սերունդների միտքն ու հոգին և հեռանում այս աշխարհից՝ իրենց լույսի շողարձակումը թողնելով երկրի վրա։ Դրանով է պայմանավորված նրանց մեծությունը։ Այդպիսի բացառիկ մեծություններից է Ակսել Բակունցը՝ չքնաղ Զանգեզուրի զավակը։

Թեև Բակունցը մշտապես եղել է գրականագետների տեսադաշտում, սակայն մերկողմից ընտրված թեման լիովին չի սպառվել ուսումնասիրությունների շրջանակում։ Թեմայի արդիականությունը պայմանավորված է բակունցյան նրբահյուս պատկերների բացահայտման անհրաժեշտությամբ, որոնք նրա խոսքարվեստի, թերևս, ամենակարևոր ու ամենախոսուն դրսևորումներն են։

Հայտնի է, որ գրողի խոսքարվեստի կատարելությունը հիմնականում պայմանավորված է նրա ստեղծած պատկերների հաջողվածությունից։ Ստեղծագործության գաղափարը գրողի վերաբերմունքն է իր պատկերած նյութի նկատմամբ։ Նույն նյութի հանդեպ տարբեր գրողներ կարող են տարբեր վերաբերմունք ունենալ, կարող է տարբեր լինել նրանց գնահատության սկզբունքը։ Հենց դա էլ գրական երկի գաղափարն է՝ պայմանավորված գրողի ստեղծագործական աշխարհայացքով։ Ստեղծագործությունների գաղափարը կարող է նույնը լինել, բայց տարբեր պիտի լինի դրանց պատկերման ձևը։ Յուրաքանչյուր պատկեր ծառայում է որոշակի գաղափարի արտահայտմանը։

Սույն աշխատանքում մեր առջև նպատակ ենք դրել բացահայտել պատկերի և գաղափարի ներդաշնակության դրսևորումները Բակունցի պատմվածքներում։

Թեմայի ուսումնասիրության համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները.**

1. ներկայացնել Ակսել Բակունցի ստեղծագործական աշխարհի առանձնահատուկ գծերը,
2. ներկայացնել գրական-գեղարվեստական պատկեր հասկացությունը,

պատկերի տեսակները,

3. բացահայտել բակունցյան պատկերաստեղծման առանձնահատկությունները:

Աշխատանքը շարադրել ենք գրականագիտական վերլուծության, համադրական և պատմահամեմատական մեթոդներով:

Ա. Բակունցի մասին գրել են շատերը՝ Ա. Տերտերյանը, Ս. Աղաբաբյանը, Էդ. Ջրբաշյանը, Դ. Գասպարյանը, Ռ. Իշխանյանը, Հ. Մկրտչյանը, Հր. Թամրազյանը, Ս. Աթաբեկյանը և այլք: Բակունցյան խոսքարվեստի ուսումնասիրության գործում անգնահատելի են Ռ. Իշխանյանի «Բակունցի լեզվական արվեստը» (1965 թ.) և«Բակունցի կյանքն ու արվեստը» (1974 թ.), ինչպես նաև Ս. Աթաբեկյանի «Ակսել Բակունց. խոսքի ու… լռության պոեզիան» (2000 թ.) աշխատությունները: Աշխատանքը գրելիս ուսումնասիրել ենք վերոնշյալ աշխատությունները, օգտվել ենք տարբեր հոդվածներից, որոշ թերթերից, համացանցային կայքերից և էլեկտրոնայինգրականությունից:

Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից (գլուխ 1-ին՝ «Բակունցի աշխարհն ու արվեստը», գլուխ 2-րդ՝«Պատկերի տեղն ու դերը Բակունցի պատմվածքներում»), եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ I

ԲԱԿՈՒՆՑԻ ԱՇԽԱՐՀՆ ՈՒԱՐՎԵՍՏԸ

«Ակսել Բակունցը…Ամենալուսավոր, ամենապայծառ, «արցունքի պես ջինջ» գրողը, արձակի նուրբ քնարերգուն, ամենադրամատիկ կերպարը ամբողջ 1930-ական թթ. գրական-հանրային կյանքի անցուդարձի մեջ»: /7, էջ 6/

Դավիթ Գասպարյան

Հայ նորագույն գրականության ինքնատիպ դեմքերից է Ակսել Բակունցը: Գեղարվեստական արձակի քնարականությունը, կերպարների հոգեբանական նրբերանգները, կյանքում գեղեցիկն ու բիրտը տեսնելու ու պատկերելու գեղարվեստական արտահայտչականությունը նրա գրական երկերին անկրկնելի հմայք են հաղորդել:

Ակսել Բակունցը /Ալեքսանդր Թևոսյանը/ ծնվել է 1899թ հունիսի 1-ին Գորիս քաղաքում: Բազմանդամ է եղել նրանց ընտանիքը: Գրողը, նրա երեք եղբայրներն ու յոթ քույրերը ծանր աղքատության մեջ են մեծացել: 1910-ից հինգ տարի սովորել է քաղաքային ծխական դպրոցում: Այնուհետև ուսումը շարունակել է Գևորգյան ճեմարանում, ուր ընդունվել է հոգևոր ղեկավարությանը համաքաղաքացիների կողմից ուղղված խնդրանքի շնորհիվ: Ճեմարանի դասարանական բաժինը ավարտել է 1917 -ին: Լսարանական բաժնում սովորել չի հաջողվել:

Գրողի առաջին տպագիր երկը եղել է «Հիմար մարդը» հեքիաթը, որը տպագրվել է 1911-ին <<Աղբյուր» հանդեսում: Քաղաքի հասարակական կյանքի նկատմամբ եռանդուն մոտեցում ունեցող երիտասարդը 1915 թ.-ին Շուշիի <<Փայլակ» թերթում Գորիսի քաղաքագլխի և կառավարչի դեմ ֆելիետոն է տպագրում, որի պատճառով նրան 33 օր ձերբակալում են: 1915-1916թթ. նա ուսուցիչ է աշխատում Լոր գյուղի դպրոցում: Այդ շրջանում ստացած տպավորությունների արդյունք է <<Խոնարհ աղջիկ»

պատմվածքը:

1917-1918 թթ.-ին, որպես կամավոր, Բակունցը մասնակցել է Էրզրումի, Մամախաթունի, Արդահանի, Սարդարապատի կռիվներին: Այդ ընթացքում թղթակցել է «Հորիզոն», «Աշխատավոր» պարբերականներին, մասնակցել Կարսի «Ռազմիկ» թերթի խմբագրական աշխատանքներին: Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին աշխատել է Երևանի «Լույս» տպարանում, «Զանգ» թերթում, եղել է «Հառաջ» թերթի թարգմանիչ և լրատու, «Հայաստանի աշխատավոր»-ի խմբագրության աշխատակից: ՀՀ Ազգային ժողովում մինչև 1919 թ. հոկտեմբեր ամիսը եղել է նիստերի արձանագրող: 1919 թ. նոյեմբերից սովորել է Թիֆլիսի պոլիտեխնիկումի գյուղատնտեսական բաժանմունքում, հետո կրթությունը շարունակել է Խարկովի գյուղատնտեսական ինստիտուտում /1920-1923/: Ուսումնառությունն ավարտելուց հետո՝ 1924-1926 թթ.-ին, աշխատել է որպես Զանգեզուրի գավառի գլխավոր գյուղատնտես: 1926 թ. տեղափոխվել է Երևան, ուր ևս աշխատել է գյուղատնտեսի մասնագիտությամբ հողժողկոմատի սերմնաբուծարանում: Նա հիմնադրել է «Գյուղացու գրադարան» մատենաշարը, տպագրել հանրամատչելի գրույցներ՝ «Խոտորջուրի կոմունան», «Կարտոֆիլի մշակությունը»:

1923-1925 թթ.-ին «Մարտակոչ», «Խորհրդային Հայաստան» օրաթերթերում տպագրվում են Բակունցի՝ լեռնային գյուղերի իրական պատկերը ներկայացնող ակնարկաշարերը /«Մեր գյուղերում», «Գավառական նամականի», «Նամակներ գյուղից»/: Ժամանակի մամուլում նա հանդես է գալիս նաև գեղարվեստական ստեղծագործություններով: Այս տարիներին են տպագրվել «Միրհավ», «Սաբու», «Ալպիական մանուշակ» պատմվածքները: 1927 թ.-ին լույս է տեսնում պատմվածքների առաջին ժողովածուն՝ «Մթնաձորը»: Հենց այս շրջանում նա համագործակցում է«Նոյեմբեր» գրական միության աշխատանքներին և Եղիշե Չարենցի, Մկրտիչ Արմենի, Գուրգեն Մահարու և այլ համախոհների հետ եռանդուն կերպով գրականությունը մղում ազգային կյանքը պատկերելու հունի մեջ: Բակունցի օժտվածությունը դրսևորվում է նաև կինոարվեստի բնագավառում: Նրա սցենարով Հայֆիլմում նկարահանվում են «Խաչի ստրուկները» /«Սև թևի տակ» խորագրով/, «Արևի զավակը», «Ալագյազ»,

«Զանգեզուր» ֆիլմերը:

Բակունց արձակագրի տաղանդը հավասարապես դրսևորվել է նաև վիպակներում և վեպերում: Նրա գրական ժառանգության մեջ դժբախտաբար քիչ են ավարտուն տեսքի բերված ծավալուն արձակ ստեղծագործությունները: Ամբողջական և ավարտված վիպակներ են «Հովնաթան Մարչ» և «Կյորես» երկերը: Ենթադրվում է, որ գրողը ամբողջապես ավարտել է «Կարմրաքար», «Որդի որոտման», «Խաչատուր Աբովյան» վեպերը, սակայն նրանք մեզ են հասել հատվածաբար: Մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի կյանքն ու գործն ուսումնասիրելու ընթացքում նաև գրել է«Խաչատուր Աբովյանի «անհայտ բացակայումը» ուսումնասիրությունը:

Բակունցը նաև թարգմանական աշխատանք է կատարել: Թարգմանել է ռուս նշանավոր գրող Ն. Գոգոլի «Տարաս Բուլբա» վիպակը: Աշխարհաբարի է փոխադրել հայ միջնադարյան առակագիր Վարդան Այգեկցու «Աղվեսագիրք» առակների ժողովածուն:

«Ակսել Բակունց: Կյանքը և ստեղծագործությունը» մենագրության մեջ գրականագետ Դավիթ Գասպարյանը գրել է. «Դժվարին գրական կյանքով ապրեց Բակունցը, որովհետև սկզբունք և ուղղություն ունեցող գրող էր, ջիղ ու նկարագիր ունեցող մարդ: Դեմ կանգնելով ժամանակի ճառասացներին և գրական քաջնազարներին՝ նա ճշմարիտ գրականության ուղին էր շարունակում. բանավեճերով ժխտելով անցյալի արժեքները մերժողներին՝ միջնադարյան ժամանակագրությունների գեղարվեստական սկզբունքն էր զարգացնում և հիմնավորապես պաշտպանում Թումանյան-Տերյան տարբեր գրական ակունքներից եկող, բայց հենց իր մեջ հրաշալիորեն համատեղվող ավանդույթները»:/7, էջ 152/

Բակունցի դեմ ուղղված քաղաքական մեղադրանքների հետևանքով նրան 1936 թվականի օգոստոսի 9-ին բանտարկում են: Բոլորի պես մեղադրվում էր «հակահեղափոխական, հակախորհրդային, նացիոնալիստական» գործունեությանմեջ: Երևանի բանտում 11 ամիս շարունակ ենթարկվել է հարցաքննությունների և կտտանքների: ՍՍՀՄ գերագույն դատարանի զինվորական հանձնաժողովի արտագնա նիստի փակ դատական խորհրդակցության որոշմամբ 1937 թ. հուլիսի 7-ի առավոտյան՝ 25-րոպեանոց հարցաքննությունից հետո Ակսել Բակունցը դատապարտվում է պատժի առավելագույն չափի՝ գնդակահարության: Ժամանակի հայ մեծագույն արձակագիրներից

մեկին գնդակահարում են 1937 թ. հուլիսի 8-ին:

Գրեթե քսան տարի Բակունցի գրականությունը խլվեց իր ժողովրդից, արգելվեց կարդալ ու հիշատակել նրա ժառանգությունը: Եվ միայն 1955 թվականի մարտի 2-ին Բակունցն արդարացվեց, իսկ նրա ստեղծագործությունը վերադարձվեց հայ գրականությանն ու հայ ընթերցողին:

«...Բակունցը թափանցում է անտեսանելի, բայց մեծ մի աշխարհ, ազգային հոգեբանության ոլորտներ՝ դուրս հանելով այնտեղից բազում գեղեցկություններ, շոշափելի և աներևույթ գանձեր: Նա նոր դպրոց բացեց հայ արձակի մեջ, նրա ազդեցությունը ակներև է Մահարու և 30-ական թվականների գրեթե բոլոր երիտասարդ արձակագիրների վրա»,/ 9, էջ 430/-գրել է Հրանտ Թամրազյանը:

Պատահական չէ, որ Բակունցը նախապատվությունը տվել էր արձակի փոքր տեսակին, որովհետև պատմվածքն ու նորավեպը մեծ զարգացում էին ապրել անմիջապես իրենից առաջ և գերիշխում էին արևելահայ ու արևմտահայ արձակում: Հիշենք Գրիգոր Զոհրապի ու Երուխանի, Թլկատինցու և Զարդարյանի, Թումանյանի ու Իսահակյանի, Դեմիրճյանի ու Զորյանի ստեղծագործությունները: Գրական դասերը և սեփական աշխարհընկալումն ու գեղագիտական մտասևեռումները մի կողմից Բակունցի պատմվածքների գեղարվեստական աշխարհը հարստացրել են քնարականությամբ, մյուս կողմից՝ հստակատեսությամբ ու իրապաշտական, իրատեսական մոտեցումներով: Խոսքի նուրբ քնարականությունը և հայրենասիրության առանձնահատուկ խորությունը նա ժառանգել էր Վահան Տերյանից, իսկ էպիկական սեղմ ու դիպուկ նկարագրությունների արվեստը, խոսքի պարզությունը՝ հովհաննես Թումանյանից: Այս մասին գրականագետ Դ. Գասպարյանը գրել է. «Բակունցի գեղարվեստական աշխարհի ձևավորման գործում առանձնահատուկ տեղ ունեն երկու անուն՝ Հովհաննես Թումանյան և Վահան Տերյան»:/7,էջ88/ Այդպիսի գեղարվեստական ու գեղագիտական համադրություններով են ստեղծվել նրա «Մթնաձոր»/1927/, «Սպիտակ ձին» /1929/, «Սև ցելերի սերմնացանը» /1933/, «Անձրևը»/1935/ ժողովածուների պատմվածքները: Բակունցի պատմվածքներում արտացոլվել է նախախորհրդային և վաղ շրջանի խորհրդային տարիների հայ գյուղաշխարհի կյանքը: Գյուղաբնակ մարդկանց նիստուկացի, սոցիալական հարաբերությունների մեջ դրսևորվում են ուրույն հոգեբանություն, բնավորության գծեր,

որոնք պատկերված են Բակունցի գեղարվեստական մտածողության հստակատեսությամբ ու առանձնահատուկ գուներանգներով:

«Մթնաձոր» ժողովածուում զետեղված պատմվածքները, թվում է, առավել համակողմանիորեն են ներկայացնում Բակունց արձակագրի տաղանդի առանձնահատկությունները: Ժողովածուի պատմվածքներում ակնառու է բնության ու մարդկանց յուրօրինակ կապի պատկերումը: «Ինչպես երևում է պատմվածքների սյուժեներից, Մթնաձորը մի այնպիսի աշխարհ է, ուր դեռևս միմյանցից չեն անջատվել իրականությունն ու առասպելը, առօրյան ու լեգենդը, ուր մարդն ու արջը ապրում են կողք կողքի, ուր բնության և գյուղի միջև չկան էական տարբերություններ, բնությունը գյուղի մեջ է, գյուղը՝ բնության ծոցում…»,/5, էջ 8/ -գրում է գրականագետ Ս. Աղաբաբյանը:

«Բակունցն, ահա, գնաց դեպի բնաշխարհ, այդ աշխարհը պայմանականորեն կոչեց Մթնաձոր և հայտնաբերեց այդ աշխարհի մարդկանց, նրանց կեցության կերպը, ամենակարևորը՝ այդ աշխարհի բարձրագույն գեղագիտությունը, որը մարդու հոգու մեջ ննջող և արտաքին աչքի համար գրեթե աննկատ գեղեցկությունն է» ,/7,էջ 181/-գրում է գրականագետ Դ. Գասպարյանը:

Բակունցյան աշխարհը ձուլված է բնությանը: Այստեղ մարդը և բնությունը, մարդու կյանքը և բնության տարերքը, մարդկանց ներքին փոխհարաբերություններն ու բնության հետ նրանց ունեցած կապերը միաձուլված են: Լեռների մեջ փակված, անտառների մեջ կորած, ժամանակի ընթացքը իր շարժման օրենքներով չափող մի նախաստեղծ ու ինքնավար աշխարհ է սա, որն ունի իր, միմիայն իր ապրելու կերպն ուօրենքը: Ժամանակն ասես կանգ է առել այստեղ: Մեկուսացած ու ինքնամփոփ՝ մարդիկ այստեղ մի կողմից պահպանում են նախնադարից մնացած սովորություններ, մյուս կողմից նոր կենցաղ ու նկարագիր ձեռք բերում՝ շփվելով բնության հետ և հարմարվելով նրա օրենքներին: Հավերժական ժամանակը Բակունցի ստեղծագործության մեջ ստանում է կյանքի անվախճանականության նշանակություն և մթնաձորյան աշխարհի համար դառնում հավիտենական կեցության նախապայման:

Բակունցն ուշադրության կենտրոնում է մարդու գոյության նախնականությունը, բնության հետ տնականորեն ապրելու, նրա հոլովույթի մեջ իր գոյությունը պայքարելով հաստատելու ձգտումն ու հավերժանալու օրինչափությունը /«Սաբու»,«Աքարում»/:

Բնության գրկում ապրող մարդկանց մեջ ամրապնդվել է նաև բնության անզգայությունը, հոգևոր կապի պակասը: Այս երևույթը պատկերված է «Այու սարի լանջին», <<Մթնաձորի <<չարքը» և այլ պատմվածքներում: Թվում է «ոչ թե հոգևոր կապն է մարդկանց միավորում, այլ սոսկ աշխատանքը, սերնդածնության բնազդը և համակեցության սովորույթը» /Դ.Գասպարյան/: Բայց ահա, գյուղաշխարհում մարդկանց մեջ դրսևորվող նրբությունն ու գեղեցկությունը բախվում են բնական, բնազդային կապերին, կոպիտ ուժին, որոնք նաև սոցիալական շերտավորման հետ առնչություններ ունեն, ձևավորված կոպիտ բարքերի, չքաղաքակրթված զգացումների հետ: Այսպես, «Մթնաձորի «չարքը» պատմվածքում Ասյա անունով մի հրահանգչուհի գյուղ է գալիս և գիշերում գյուղացի Սաքանի տանը: Քաղաքաբնակ Ասյայի կանացի տեսքը, բույրերը, շորերը, երևացող մերկությունը անսովոր հուզմունք ու տպավորություն են գործում Սաքանի ներաշխարհում: Նրա աչքին իր կնոջ թերությունները ավելի ակնառու են դառնում, հիասթափություն առաջ բերում: Հրահանգչուհին «չարք» է թվում: Փաստորեն, հաստատվում էր այն, որ գյուղացիները ևս կարող էին գնահատել գեղեցկությունը, սակայն զրկված էին դրանից: Բացի այս, կանացի գեղեցկությունը դիտվում և գնահատվում է, երբ հնարավոր է լինում համեմատել դրսից եկածին գյուղում եղածի հետ:

Ծրագրային նշանակություն ունի և գրողի լավագույն պատմվածքներից մեկն է <<Ալպիական մանուշակը>>: Այն նվիրված է Ե.Չարենցի կնոջը՝ Արփենիկ Չարենցին: Այստեղ հեղինակին հետաքրքրում են գեղեցիկի ընկալման, իրական կյանքի և գեղեցիկի փոխհարաբերության հարցերը: Նկարիչը տեսնում է բնության, ալպիական մանուշակի, հնձվորի կնոջ գեղեցկությունը: Նկարում նրան՝ համեմատելով անցյալում ծովափին հանդիպած իրեն ծանոթ մի ուրիշ կնոջ գեղեցկության հետ: Հնագետը անտարբեր էր բնության գեղեցիկ տեսարանների հանդեպ,նրա ուշադրությունը սևեռված է Կաքավաբերդի ավերակների վրա, նրանց միջոցով ցանկանալով վերստեղծել պատմական անցյալի ինչ-ինչ դրվագներ: Երրորդ ձիավորը, որ նրանց ուղեկիցն էր, մտածում էր թարմ լավաշների, պանիր ու հացի մասին: Ըստ էության, պատմվածքի այս հերոսներից յուրաքանչյուրն իր ներփակ աշխարհում է ապրում և աշխարհի մասին ունի իր սահմանափակ հետաքրքրությունների շրջանակը: Վերոհիշյալ կերպարների նման պատկերացումները նկատի ունենալով է գրողը ստեղծել հետևյալ պատկերը. «Ծաղկափոշու մեջ թաթախված գունավոր բզեզին մանուշակը ճոճք է թվում, աշխարհը՝

ծիրանագույն բուրաստան»: /5, էջ 135/

Հեղինակը հնձվորի կնոջ գեղեցկությունն համեմատում է ալպիական մանուշակի հետ, որը վերջինիս նման անպաշտպան էր և ենթակա կոպիտ վերաբերմունքի, ոտնակոխ լինելու ցանկացած պահի: Իսկ այդ կարծես չի ուշանում: Նրա ամուսինը որդուց իմանալով, որ նկարիչը նկարել է մորը՝ վայրենի խանդի պատճառով փայտով ծանր հարված է հասցնում իր կնոջը:

Վերհուշի ձևով է գրված «Խոնարհ աղջիկը», ուր բացահայտված է գեղեցիկի և սիրո մի ուրույն , զարմանալի նուրբ զգացողություն ու արտահայտություն: Խոնարհի առաջ բերած զգացմունքի նրբերանգների դրսևորումները ուսուցչի հոգում, դրսից եկած անհատի կողմից հայտնաբերված գեղեցկություն էր: Երջանիկ լինելու արժանի նրբագեղ Խոնարհի ճակատագիրը, սակայն, ի վերջո կենսական ծանր պայմանների ու հանգամանքների բերումով /ամուսինը մահանում է, իրեն ու երեխաներին միայնակ կերակրելը դժվարանում է/ այլ ընթացք է ունենում:

«Միրհավ» պատմվածքում կանացի գեղեցկությունը, նրա կենսատու էներգիան արդեն զգում, տեսնում ու արժևորում է մթնաձորյան գյուղաշխարհի մարդը՝ Դիլանը: Պատմվածքում գրողը արտահայտում է այդ սիրո ծնած ապրումների, զգացողությունների այն հարստությունը, որ ուղեկցում է Դիլանին մինչև խոր ծերություն: Սոնան միրհավի նման թռավ նրա ձեռքից. աղջկան ամուսնացնում են գյուղի մի հարուստ երիտասարդի հետ: Թեև հետագայում Դիլանն էլ է ամուսնանում, իսկ Սոնան մահանում է ծննդաբերության ժամանակ, սակայն փոխադարձ սիրո մորմոքն է շարունակում մնալ Դիլանի հոգում:

Բակունցի արձակը հայ գրականության բարձրարժեք ձեռքբերումներից է: Նրա լավագույն պատմվածքները շարունակում են հուզել ու հետաքրքրել հայ ընթերցողին:

«Սև ցելերի սերմնացանը» ժողովածուում են զետեղված նրա լավագույն պատմվածքներից «Ծիրանի փողը», «Նամակ ռուսաց թագավորին», «Սպիտակ ձին»:

«Ծիրանի փողը» պատմվածքը հեռվում մնացած հայրենիքի և հարազատների կարոտը ծխացնող, փրկված հայրենակիցներին ի մի բերող և հաղթական զորավոր ուժով ներշնչված երկ է, որը նոր հուն բացեց հայ արձակում: «Նամակ ռուսաց թագավորին» պատմվածքում նախախորհրդային տարիներին՝ Առաջին աշխարհամարտի /1914- 1918/ շրջանում հայ գյուղացու կացությունն ու հոգեբանությունն է բացահայտված: Երբ Արթին

պապը, ցարական բանակում գտնվող որդու մասին մտահոգվելով, իր անունից ռուսաց թագավորին ուղղված նամակ է գրել տալիս, գրած նամակի համար նրան տեղական իշխանության ներկայացուցիչները անխնա ծեծում են: «Սպիտակ ձին» պատմվածքում բացահայտվում է նույն շրջանում գյուղացի Սիմոնի մտահոգությունը իր Ցոլակ անունով ձիուն ռազմաճակատի համար տանելու կապակցությամբ: Ընտանի կենդանիները, այս դեպքում ձին, գյուղացու ամենահարազատ, ընտանիքի անդամներին հավասար արժեք ունեցող արարած են: Նրան թվում է, «թե իրենց տնից տանում են ոչ թե մի ձի, այլ իր եղբորը, իր որդուն, այնպես, ինչպես անցյալ ամառ շատտներից տարան նրանց որդիներին ու եղբայրներին»: /5, էջ 216/

Բակունցի աշխարհազգացողությանը հարազատ է մարդու և բնության ներդաշնակությունը, բնափիլիսոփայությունը, մարդասիրությունը, կարելի է ասել նաև բնապաշտությունը: Հիմնվելով ազգային գրականության՝ դարերից եկող ավանդների վրա՝ Բակունցն ասպարեզ բերեց արձակի նոր որակ, որ բնութագրվում է հատկապես պատկերային առանձնահատուկ ձևերով:

Լինելով ռեալիստական հայ արձակի գեղագետը՝ Բակունցին հաջողվեց շատ բանաստեղծորեն պատկերել կյանքն ու մարդուն: Բնութագրելով Բակունցի պատմվածքները՝ Ավ. Իսահակյանը գրել է, որ դրանք «այնպես նուրբ են, կարծես հեքիաթ ես լսում, երազ ես տեսնում, այնպես կախարդորեն հալվում են իրար մեջ անցյալն ու ներկան, որ հուշը դառնում է ներկա և իրական ներկան դառնում է երազ»:

ԳԼՈՒԽ I I

ՊԱՏԿԵՐԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ԲԱԿՈՒՆՑԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Հայտնի է, որ գրողի խոսքարվեստի կատարելությունը հիմնականում պայմանավորված է նրա կերտած կերպարների և պատկերների (բնանկար, պատկեր-գործողություն, պատկեր-խոհ և այլն) հաջողվածությունից, որովհետև պատկերը ոչ միայն ինքնուրույն արտահայտչամիջոց է, այլև, որպես կանոն, տարբեր արտահայտչամիջոցների ներթափանցումով մտահղացված ամբողջություն: Սակայն լեզվաոճական ուսումնասիրություններում երբեմն նախապատվությունը տրվում է տվյալ պատկերի ներսում առկա առանձին արտահայտչամիջոցների զուտ քերականական և բառակազմական վերլուծություններին՝ մասնատելով, երբեմն էլ գաղափարազրկելով պատկերի ամբողջությունն ու նրա մտահղացման նպատակը կամ էլ շարադրանքի վերջնամասում թվարկվում են մի քանի պատկերներ (հիմնականում բնապատկերներ) և որպես եզրակացություն գրվում հանրահայտ վերացական նախադասություններ՝ մոտավորապես հետևյալ բովանդակությամբ.

«Այս պատկերը նպաստել է կերպարի տիպականացմանը», «Մեծ լիցք է հաղորդել ստեղծագործության գեղարվեստականությանը» և այլն: Իսկ թե ինչպե՞ս է նպաստել կամ ի՞նչ լիցք է հաղորդել, գրեթե չի նշվում: Մինչդեռ գեղարվեստական պատկերի գլխավոր նպատակը երկի գաղափարական բովանդակությունը լրացնելն է, նրա ձևավորման նրբերանգներին մասնակցելը: Բնականաբար առանց տվյալ երկի գրականագիտական որոշ լուսաբանումների պարզապես հնարավոր չէ այդ ստեղծագործությունը ենթարկել լեզվաոճական վերլուծության:

Բարեբախտաբար Ա. Բակունցի երկերի վերլուծությունները հիմնականում զերծ են վերոհիշյալ միակողմանիությունից: Կարծում ենք՝ պատճառը ոչ միայն ուսումնասիրողների բարեխղճությունն է, այլև արձակագրի խոսքարվեստը, որի էական հատկանիշներից մեկը գաղափարի, գործողության ու պատկերի ներդաշնակությունն է:

Բակունցը պատկերների վարպետ է, և այդ պատկերներն ավելի խոսուն են, քան պատմողական բնույթի որևէ շարադրանք: Բակունցի ստեղծագործությունների

պատկերային համակարգի լավագույն նմուշներից է «Ալպիական մանուշակ» պատմվածքի սկիզբը, որտեղ արտահայտված բոլոր պատկերներն ու իմաստները կրկնվում են դրան հաջորդող բուն պատմության մեջ: Ե՛վ բովանդակային, և՛ ձևային-ոճական առումով սկզբնապատկերն, ասես, բուն պատմվածքի խիտ արտահայտությունն է: Ս. Աթաբեկյանն այդ մասին գրել է.« Այն կարելի է բնութագրել նախապատմվածք (պատմվածք՝ պատմվածքից առաջ)»:/2, էջ 170/

Որպես օրինակ կարող ենք դիտարկել «Ալպիական մանուշակ» պատմվածքի հետևյալ հատվածները՝

ա/ «Ե՛վ գյուղում, և՛ բերդի գլխին ժամանակը սահում է դանդաղ, տարիները նույնծառի միանման տերևներն են»: /5, էջ 135/

բ/«Քանի՛ սերունդ է ապրել Բասուտա գետի մոտ, կարկատած թաղիքները փռել ցախերի վրա, եղեգնով պատել վրանները, և ամեն գարնան, երբ Կաքավաբերդի լանջին բացվել է ալպիական մանուշակը, այծ ու ոչխարը քշել են բերդի լանջերը, պարկը պարենով լցրել ու ձմեռը կրծել կորեկ հաց և այծի պանիր»: /5, էջ 136/

Առաջին պատկերում,որը ստեղծվածէ փոխաբերության և համեմատության հիմքով, բացակայում են այսպիսի կառույցներին բնորոշ նման և պես կապերը: Ուրիշ մի հեղինակ գուցե այս տողերում կներմուծեր ասես, կարծես վերաբերականներից մեկը: Բայց Բակունցի վրձնահարվածը չի հանդուրժում ավելորդ գծեր: Կաքավաբերդում տարիները ոչ թե նման են նույն ծառի միանման տերևներին, կամ կարծես նույն ծառի միանման տերևներն են, այլ ուղղակի նույն ծառի միանման տերևներն են: Հատկապես ուշադրության է արժանի տարիներ բառի տարողունակությունը, որի տակ հասկացվում է այդ լեռնաշխարհում ապրող մարդկանց միօրինակ կյանքը, կենցաղը, առօրյան: Նույն գաղափարի փոքր-ինչ ծավալուն արտահայտությունն է երկրորդ պատկերը, որն իր շարադրանքով պատկեր-գործողություն է՝ աստիճանաբար վերածված նաև պատկեր-խոհի: Հռետորական հարցը («Քանի՛ սերունդ…») ժամանակի անհաշվելի տևականությունն է ընդգծում, մարդկանց կյանքի ու կենցաղի միապաղաղությունը: Այս պատկերում էլ ակնառու է խոսքի հակիրճությունը, որին նպաստել է համըմբռնման կիրառությունը. մանուշակ, այծ, ոչխար, պարկ բառերը, դրված են եզակի թվով, թեև գործածվել են հոգնակի թվի իմաստով: Տարբեր արտահայտչամիջոցների փոխներթափանցմամբ ու համակցմամբ նմանատիպ պատկերները ասես առարկայացնում, կենդանացնում են այն

գաղափարները, որոնք ընկած են Բակունցի երկերի հիմքում:

Ուշադրություն դարձնենք նաև ներքին հակադրությամբ կառուցված հետևյալ պատկերներին. «Հեռվից ավերակներ չեն երևում, և այնպես է թվում, թե բուրգերի գլխին հսկում կա, զոց են ապարանքի երկաթե դռները, աշտարակի գլխից մեկը ահա ձայն է տալու քարափը բարձրացողին: Իսկ երբ քամին ցրում է ամպերը, ձորերում հալվում են ամպի ծվենները, պարսպի վրա երևում են մացառներ, աշտարակի խոնարհված գլուխը և կիսով չափ հողի մեջ խրված պարիսպները: Ոչ մի երկաթյա դուռ և ոչ մի պահակ աշտարակի գլխին»: /5, էջ 135/

Զավեն Ավետիսյանը գրում է.« Գրական երկի մեջ սեղմված ժամանակը, որ նույն գեղարվեստական ժամանակն է, փոխանցվում է ընթերցողին՝ դառնալով նրա կյանքի իրական ժամանակի մի պահը»: /4, էջ 144/

Գրողը կարող է առաջնորդվել ոչ թե ժամանակի անցյալ-ներկա-ապագա բնական ընթացքով, այլ կարող է փոխել դրանց տեղերը: Հատկապես տարածված է, երբ անցյալը որպես հուշ հառնում է ներկայի մեջ: Այս ձևին շատ է դիմում Ակսել Բակունցը:

«Ալպիական մանուշակ» պատմվածքում նկարիչը նմանություն է տեսնում Կաքավաբերդում ապրող գեղջկուհու և իր հուշերում ապրող գեղեցկուհու միջև: Նկարչի հուշերը կենդանանում են որպես ներկա և ձուլվում ներկային: Պատկեր-խոհերը միջոց են դառնում զգացմունքների արտահայտման, դավաճանության գաղափարի դրսևորման: Գրողի գաղափարների կերպավորմանն է նպաստում երկու կանանց հակադրությունը:Նրանք նման են արտաքնապես, երկուսն էլ գեղեցիկ են, բայց մեկին վիճակված էր տանջվել ֆիզիկապես ու հեգեպես, իսկ մյուսին՝ սիրված լինել, բայց չգնահատել ունեցածը: Պատմվածքում կարելի է գտնել պատկեր-ապրումի օրինակներ ևս: Ահա՝«Խանդը կայծակի պես փայլատակեց մռայլ հնձվորի սրտում: Աչքերը լայնացան, նա գունատվեց: Մայրը նայեց տղային, հրդեհվեց դեմքը, հայրը տեսավ կնոջ դեմքի կարմիրը: Այդ ամենը կատարվեց մի վայրկյանում: Հաջորդ վայրկյանին մարդը գազազած արջի նման ոստյուն արեց, նրա մազոտ ձեռքերը սեղմեցին ծանր մահակը, և մահակն անասելի թափով իջավ կնոջ թիկունքին»: /5, էջ 143/ Այս պատկերը կատարյալ ներկայացնում է խանդի ու դաժանության ավելի շուտ գազանին, քան մարդուն հատուկ լինելու գաղափարը: Մեկ այլ տեղ կարդում ենք՝ «Կինը աղաղակ չհանեց, այլ ցավից գալարվեց: Նա ձեռքը թիկունքին տարավ, ապա դուրս եկավ վրանի դռանը անձայն հեկեկալու»: /5, էջ

143/ Այս պատկերը կնոջ զսպվածության, բայց և միաժամանակ իրավունքների ոտնահարման գաղափարի գեղարվեստորեն ներդաշնակ արտահայտությունն է:

«Ալպիական մանուշակ» պատմվածքը շատ ցայտուն բացահայտում է գրական-գեղարվեստական պատկերի այն հնարավորությունը, երբ պատկերների միջոցով աշխարհը ներկայացվում է տարբեր դիտանկյուններից՝ միասնական գեղարվեստական հեռանկարի ներսում: Այստեղ Բակունցը պատկերել է նահապետական աշխարհին ուղղված տարբեր հայացքներ՝ նկարչի, հնագետի, ուղեկցողի, հնձվորի, երեխայի, հնձվորի կնոջ հայացքները կամ աշխարհընկալումը: Ամեն ինչ փոխկապակցվածության մեջ է, չնայած որ հսկայական այս աշխարհում ամեն մեկն ունի իր «աշխարհը», իր պատկերացումները երջանկության, ուրախությանու կյանքի մասին:

Այժմ դիտարկենք պատկերների այլ օրինակներ: «Մթնաձոր տանող միակ արահետն առաջին ձյունի հետ փակվում է, մինչև գարուն ոչ մի մարդ ոտք չի դնում անտառներում: Սակայն Մթնաձորում այժմ էլ թավուտ անտառներ կան, ուր ոչ ոք չի եղել: Ծառերն ընկնում են, փտում, ընկած ծառերի տեղ նորն է ծլում, արջերը պար են խաղում, սուլում են չոբանի պես, ոռնում ենգայլերը, դունչը լուսնյակին մեկնած, վարազները ժանիքով փորում են սև հողը, աշունքվա փտած կաղիններ ժողովում»: /5, էջ 28/

Այս գեղեցիկ պատկերն ամենևին բնության նկարագրություն չէ միայն, այլ շատ խորը և կարևոր գաղափարի կրող: Պատմվածքն ամբողջությամբ կարդալուց հետո պարզ է դառնում, որ Մթնաձորի թավուտ անտառներում միայն ծառեր չեն ընկնում ու փտում, այլև մարդկային ճակատագրեր են խեղվում ու կործանվում. բայց կյանքը շարունակվում է: Մթնաձորի բնապատկերը շատ հասկանալի և խոսուն փոխանցում է հեղինակի այն գաղափարը կամ միտքը, թե դաժանությունը, որ թվում է, թե նախնադարյան, ասել է թե մեզանից շատ հեռու ժամանակներին պիտի հատուկ լիներ,կա և այսօր, հիմա էլ:Ահա՝«Մի ուրույն աշխարհ է Մթնաձորը, քիչ է ասել կուսական ու վայրի: Թվում է, թեայդ մոռացված մի անկյուն է այն օրերից, երբ դեռ մարդը չկար, և բրածո դինոզավրը նույնքան ազատ էր զգում իրեն, ինչպես արջը մեր օրերում: Գուցե այդպես է եղել աշխարհն այն ժամանակ, երբ քարածուխի հսկա շերտերն են գոյացել և շերտերի վրա պահել վաղուց անհետացած բույսերի ու սողունների հետքեր:Հիմա էլ Մթնաձորում մուգ-կանաչ մաշկով խլեզներ կան, մարդու երես չտեսած, մարդուց երկյուղ չունեցող:Պառկում են քարերի վրա, արևի տակ: Ժամերով կարող եք նայել, թե ինչպես է զարկում փորի մաշկը, թույլ երակի պես, կարող եք բռնել

նրանց: Խլեզները Մթնաձորում մարդուց չեն փախչում:Բարձր են Մթնաձորի սարերը. դրանից է, որ ամռան երկար օրերին էլ արևը մի քանի ժամ է լույս տալիս Մթնաձորի անտառներին»: /5, էջ 28/

Ուշագրավ է նաև պատկերի վերջին պարբերությունը. ինչպես արևը չի կարողանում լուսավորել մթնաձորու թավուտ անտառները, այնպես էլ քաղաքակրթությունը չի կարողանում մուտք գործել այնտեղ:

Ուշադրություն դարձնենք նաև նրան, թե հեղինակն ինչ քնքշությամբ է խոսում այդ աշխարհի մասին՝ համարելով այն առանձնահատուկ, ոչ սովորական, ուրույն մի աշխարհ: սա կարելի է հանդիպել այլ պատմվածքներում ևս, ինչպես օրինակ՝ «Մրոցը մի ուրույն աշխարհ է, և երբ ձորի ափով անցնում եք, մի անգամ էլ բարձրանում սարը և իջնում մի ուրիշ ձոր, այնպես է թվում, թե վերջին սարը ձեզ ծանոթ աշխարհի սահմանն էր, իսկ սարից դենը, դեպի ներքև, ընկած է անմարդաբնակ մի երկիր, որի անտառներում արջերը վայրի տանձ են հավաքում և լուսնյակ գիշերներին հաստաբուն կաղնիների մոտ գլորվում, կիսաչոր տերևների վրա արջապար խաղում»: /5, էջ 101-102/

«Մթնաձոր» պատմվածքի հերոսի՝ անտառապահ Պանինի կերպարն էլ է հրաշալի պատկերված հեղինակի կողմից.«Վայրի վարազի պես էր անտառապահ Պանինը: Մի հրեշ էր նա, անտառապետի տարազով, կոկարդով գլխարկը գլխին: Անտառում հանկարծ կերևար, փայտահատի կողքին կկանգներ, կնայեր, թե ինչպես նա արագ կացնահար է անում ծառը: Մեկ էլ թաքստոցից դուրս կգար, կմռնչար այնպես, որ արջերն էլ էին քնից զարթնում և որջերում մռռում: Լեղապատառ փայտահատին մնում էր կամ փախչել, կամ օձի պես ծռմռտել Պանինի մտրակի հարվածների տակ »: /5, էջ 29/Բակունցն անընդհատ շեշտում է ժամանակի հարատևության գաղափարը: Գրեթե բոլոր պատմվածքներում ընդգծում է, որ մարդկային կյանքն ու ճակատագիրը կարող են կորսվել, իսկ շրջապատն անտարբեր մնա դրան: Ահա մի քանի օրինակներ. «Գյուղում բոլորն էլ ճանաչում էին Վանդունց Բաղուն, գիտեին, որ նրա տունը վերի հանդը տանող ճամփի վրա է, ջաղացներին չհասած, Աթանանց մեծ ընկուզենու մոտ:…իսկ դրսում առաջվա պես Աթանանց ընկուզենին մեղմորեն օրորում է իր ճյուղերը Վանդունց խարխուլ խրճիթի վրա…»: /5, էջ 33,48/«Չորս ամիս անցավ: Աքարի պատմության համար չորս վայրկյան էլ չէր անցած ամիսները: Էլի հաճար էին ուտում, իսկ նորոգած մարագը մատնաչափ չէր փոխել գյուղի ընդհանուր տեսքը»: /5, էջ 52/

Ինչպես տեսնում ենք, դեպքեր են տեղի ունենում, դժբախտություն է պատահում մարդկանց հետ, իսկ շրջապատն անտարբեր է, ասես ոչինչ էլ չի եղել: Երբ թշնամու գնդակից զոհվում է խեղճ Պետին, գյուղացիներն անգամ չեն հիշում նրան՝ իրենց գյուղի աշխատասեր տավարածին, որը բոլորին միշտ օգնել էր:«Երբ տասնապետը եկավ խրամատին նայելու, տեսավ Պետուն՝ ընկած երեսնիվայր: Նոր փորած հողը ծծել էր արյունը կարմիր: Խրամատի մի անկյունում էլ թաղեցին նրան: Գյուղը հոգս շատ ուներ, լաց չեղավ Պետու համար: Տավարն էր, որ առավոտյան բառաչում էր գոմում, սարի կանաչին կարոտ:Իսկ գիշերվա անձրևը սրբեց, լվաց խոտերից կաթիլները Պետու արյան…Այու սարի լանջին հիմա մի կտոր տեղ կա, ուր կանաչն ավելի փարթամ է, ավելի մուգ: Փարթամ կանաչի տակ փտում են ոսկորները Պետու»: /5, էջ 66/ Շատ անգամ Բակունցի պատմվածքներում պատումը սկսվում է բնության գեղեցիկ նկարագրությամբ, բնապատկերով, հետո ծավալվում են գործողությունները, շատ անգամ դժբախտ ու տխուր վախճան ունեցող դեպքերի նկարագրություններ, իսկ պատումն ավարտվում է նույն գեղեցիկ բնապատկերով՝ ստեղծելով շարահյուսական հանգույց և խորհրդանշելով կյանքի հարատև շրջապտույտն ու տիեզերական հավերժությունը: Օրինակ՝ «Օրանջիայի ձորակում ամեն գարնան մասրենիներն են ծաղկում, բացվում են վայրի վարդերը՝ դեղին, սպիտակ:Երբ գարուն է լինում, տաքանում են Օրանջիայի քարերը, և խլեզները, փորի մաշկը դեղին, պառկում են տաք քարերի վրա, լեզուները հանում:

…Հետո քամին սերմեր բերեց, և Մանասի տան ավերակների վրա ծաղկեց մասրենին: Ամեն գարնան Օրանջիայում այնքա՛ն վարդեր են լինում՝ դեղին, սպիտակ»: /5, էջ 97, 101/

Բակունցյան շատ ու շատ պատկերներ ստեղծված են հակադրության հիմքով: Գեղեցիկ բնապատկերին հակադրվում է դաժան իրականությունը: Ահա՝«Աքար գյուղը գեղանիստ է, շրջապատված անտառներով: Անտառում դարավոր կաղնիներ կան և հին վանքի ավերակներ: Ծառերի տակով պաղ առու է հոսում, գյուղի փողոցներով անցնելիս աղտոտվում և ներքև՝ չիմաններում ճահճանում: Առավոտներն անտառից զովություն է իջնում գյուղի վրա և զովության հետ մայրենու և լորենու մաշկի հոտով հագեցած առողջ օդ: Բայց արևը կեծանելիս փողոցի աղբակույտերն են հոտում, գոմի բաց դռներից ելնող ամիակով հագեցած օդը չեզոքացնում է անտառի մաշկահոտը»: /5, էջ 48/

Նման պատկերները հուշում են, որ գյուղական գեղեցիկ հովվերգության հետևում թաքնված է ամենևին ոչ գեղեցիկ իրականությունը:

Աշոտ Տեր-Մինասյանը մի հետաքրքիր հանգամանք է նկատել և իր հոդվածում զարգացրել է այն միտքը, որ Բակունցի հերոսների մեծ մասն իրենց անշուք կյանքի ընթացքում ապրել են քիչ, բայց անմոռաց պահեր (տե՛ս Ա. Տեր-Մինասյան, Պատկերի և գաղափարի ներդաշնակությունը Բակունցի պատմվածքներում,……..): Հենց այդ անմոռաց պահերը կամ օրերն են ջերմացրել նրանց հոգիները, իմաստ տվել նրանց կյանքին: Նա զուգահեռ է տանում արևելյան մի զրույցի հետ, որտեղ մարդու ապրած տարիները հաշվվում էին ոչ սովորական ընդունված ձևով, այլ հոգեկան բավարարվածություն տված լինելու հանգամանքով: Այդպիսի հերոսներից են Արթին պապը («Նամակ ռուսաց թագավորին»), «Ալպիական մանուշակ» պատմվածքի հերոսուհին, Դիլան դային («Միրհավ»), Խոնարհը («Խոնարհ աղջիկը»): Այս հերոսներն իրենց ամբողջ կյանքի ընթացքում ըմդամենը մեկ օր են երջանիկ եղել, և կարելի է ասել,թե այդ մեկ օրն են իսկապես ապրել: Արթին պապը մեկ օրվա երջանկության պատրանք է ունեցել, երբ կանչել են ռուսաց թագավորին գրած նամակի հարցով: Դիլանի համար դա այն օրն էր, երբ Սոնան հնձան էր մտել: Խոնարհի համար ապրած էր այն օրը, երբ սիրատոչոր պատանին բռնել էր աղջկա ձեռքը և սիրտը մեկ հատիկ բառի մեջ դրած՝ շշնջացել՝ «Խոնարհս…»: «Ալպիական մանուշակ» պատմվածքի հերոսուհու համար անմոռաց կմնա այն օրը, երբ Կաքավաբերդ եկած նկարիչը նկարել էր իրեն: Այդ մեկ հատիկ օրը կամ պահը լույսով է լցրել ու իմաստավորել այս հերոսների անարև կյանքը ու լիցք հանդիսացել՝ սեփական գոյությունը մինչև գերեզման քարշ տալու, այս աշխարհում իրենց ծնունդը չնզովելու, գեղեցիկի, բարու, մարդկայինի հանդեպ ունեցած հավատը չկորցնելու համար: Ցավոք, նույնիսկ այդ միակ լուսեղեն օրվա ճերմակ թևերին արյան հետքեր կան. մահակի, մտրակի ու աքացիների հետքեր… Բոլոր պատմվածքներում, որպես կանոն, երջանիկ պատրանքներին հետևում է անարգանքներից ամենածանրը, ամենանսեմացնողը, ամենաանմարդկայինը՝ ծեծը: Արթին պապի պես միամիտ ու բարի մարդուն հենց նույն օրը ծեծում են ռուսաց թագավորին նամակ գրելու համար: Սոնայի հնձան գնալուն հաջորդող գիշերը անքնությամբ անցկացրած Դիլանին երջանիկ, բայց և հուսահատ ապրումների հորձանքը տանում է անտառ, որտեղ նա լուսաբացին գալարվում է վայրագ անտառապահի մտրակի հարվածների տակ: Առավել անարդարու վիրավորական է ալպիական գեղեցկուհու կրած ծեծը, քանզի նրա միակ մեղքն այն է, որ արտաքնապես նման է նկարչի՝ տարիներ առաջ ավազների վրա հովանոցի ծայրով

խոստումներ գրող ու ավերող ծանոթուհուն… Ճիշտ է, Բակունցի հերոսները հատկապես ծանր են տանում այդ օրվա ստացած անարգանքն ու ծեծը, որովհետև թերևս առաջին անգամ հասկանում են, որ իրենք արժանի չեն դրան: Բայց նրանք երջանիկ են, որովհետև հասկանում են նաև, որ ճակատագիրն անգամ անզոր է խլելու իրենցից այն հրաշք պահը, որ շռայլորեն ողողեց իրենց անարև աշխարհը: Կարծես ճակատագիրը փորձության է ենթարկել նրանց հավատը ու պարտվել, որովհետև նրանք իրենց ողջ կյանքի ընթացքում այսուհետ հիշելու և արժևորելու են ոչ թե ծեծն ու անարգանքը, որոնք, ի վերջո, բնորոշ են նաև այլ օրերի, այլ այդ լիարժեք ապրած պահը ու նրա անկողոպտելի երանությունը: Չնայած պրիստավի մոտ կրած ծեծը հիշելիս երբեմն աղավաղվելու է Արթին պապի բարի ժպիտը, միևնույնն է, մինչև կյանքի վերջ նա փայփայելու է ռուսաց թագավորից պատասխան ստանալու հույսը և մահվանից առաջ կնոջը հանձնարարելու է, որ նամակի պատասխանը ստանալիս գնա և իր գերեզմանին իմաց տա: «Ալպիական մանուշակ» պատմվածքի հերոսուհին էլ հավանաբար երբեք չի մոռանա, որ Կաքավաբերդ եկած մի նկարիչ իրեն, հատկապես իրեն նկարեց ու նկարն իր հետ տարավ դեպի խորհրդավոր հեռուները: Խոնարհի հոգնատանջ կյանքն էլ գուցեստեպ-ստեպ կլուսավորվի այն մեկ հատիկ օրվա ոսկեշող հեքիաթով… Բակունցի պատմվածքների այս առանձնահատկությանն ուշադրություն է դարձրել նաև Հրանտ Մաթևոսյանը: Իր հոդվածում նա գրել է. «Բակունցի հերոսները մեկ անգամ են «ճանաչում»: Եվ ակսելյան աշխարհի այս բոլոր բնակիչների ճակատին գրած է. «Ճաշակելով ճաշակեցի զսակավ մի մեղր և ահա մեռանիցեմ»: /«Գրական թերթ», 1969, թիվ 25/

Իր կյանքի տարիների քանակը մոռացած Դիլանը, աշնան ամայի այգում նստած,ի՞նչ է հիշում ու մտորում կյանքի մայրամուտին: Պատահական չէ, որ Բակունցը չի նշում Դիլանի կոնկրետ տարիքը՝ ութսուն, իննսուն կամ թեկուզ հարյուր… Դրանից պատկերը շատ բան կկորցներ. «Քանի աշուն էր անցել այն օրից, համարք չունի: Գիտի, որ ինքը զառամել է արդեն, քայլելիս հենվում է փայտին, աչքը չի տարբերում աշնան անտառի գույները, ականջը սուր չէ մանրիկ ոտնաձայն լսելու»: /5, էջ 80/

Ինչպես մեջբերված մյուս պատկերներում, այնպես էլ այստեղ առկա են տարբեր արտահայտչամիջոցների կիրառություններ: Առաջին նախադասությունը չափազանցության հենքի վրա մտահղացված փոխաբերություն է: Համընմբռնման դրսևորումներ են ականջ, աչք և ոտնաձայն բառերի եզակի թվով գործածությունները:

«Ականջը սուր չէ» մակդիրային կապակցությունն էլ, որ ավելի շատ բնորոշ է ժողովրդախոսակցական ոճին, ձուլվելով «աչքը չի տարբերում անտառի գույները» նախադասությանը, ոչ միայն բնորոշում է կերպարի հոգեֆիզիկական վիճակը, այլև նպաստում է գեղարվեստական պատկերի ամբողջականացմանը: «Միրհավ» պատմվածքն ամբողջությամբ պատկերաշար է, որի մեջ կյանքի մայրամուտին հասած հերոսը փորձում է վերհիշել իր ապրած օրերը: Եվ որքան էլ փորփրում է հիշողությունը, միևնույն է, այդ օրերի մեջ, Սոնայի հետ կապված դեպքերից բացի, ոչինչ չի մտաբերում: Եթե հնձան է, ուրեմն վերհիշում է Սոնայի լաջվարդ շապիկի բույրը, լսվում է արծաթ սուրմաների զնգոցը: Հայացքը սահում է դեպի բլրալանջ, և հիշում է, որ այնտեղ Սոնայի գերեզմանն է. «Սոնայի գերեզմանաքարի վրա մամուռ կա, գրերը վաղուց լցվել են հողով, քարը թեքվել է մի կողքի վրա և թաղվել հողի մեջ: Սոնային լաջվարդ շապիկով թաղեցին: Արդեն վաղուց փտել է լաջվարդն էլ, ոսկե մամուռի նման մարմինն էլ…»: /5, էջ 80/

Երբ հայացքը հառում է ջրին, «նրա հիշողության խավար անդունդում» բոցկլտում է «այն օրը, ինչպես միայնակ աստղը մթին երկնքում: Այն օրը, երբ Սոնան սրունքները կախել էր առվակի վրա և ծիծաղում էր…»: /5, էջ 80/

Հետո միտքը սահում և արահետով անցնում է դեպի անտառը: Իսկ անտառում՝ «Միրհավ կար անտառում, թռավ արնակոլոլ, երկու փետուր թողեց փափուկ մամուռների վրա: Միրհավի պես էր Սոնան, աչքերը խաղողի սև հատիկներ,- տարիներ առաջ, մի արևոտ աշնան, երբ իր ջլուտ ոտները պղնձաքարի ծանրությամբ ճմլում էին խաղողը, և անապակ գինին շիթ առ շիթ ծորում էր մատների արանքով… Միրհավի պես թռավ Սոնան, հետքից թողեց տխրություն և դառնաթախիծ հուշեր»: /5, էջ 80/

Այս վերջին տողերում էլ տիրապետողը փոխաբերությամբ ձևավորված պատկեր-խոհն է, որի ներսում առկա են տարբեր արտահայտչամիջոցներ՝ համեմատություն (Սոնա-միրհավ), (Սոնան՝ աչքերը խաղողի սև հատիկներ), չափազանցություն (պղնձաքարի ծանրությամբ):Հայ բակունցագետները շատ ճիշտ նկատել են, որ ուղղակի կապ կա աշնանային բնանկարի և Դիլան դայու տարիքի միջև: Ուշ աշնան նկարագրությունը խորհրդանշում է հերոսի կյանքի մոտեցող վախճանը, և այդ կապն առարկայանում է բազմաթիվ պատկերների տեսանելի մակարդակում: Դիտարկենք հետևյալբնապատկերը.

«Աշուն էր, պայծառ աշուն…

Օդը մաքուր էր, արցունքի պես ջինջ: Կապտավուն սարերն այնքան մոտ, այնքան պարզ էին երևում, որ հեռվից կարելի էր համրել նրանց մաքուր լանջերի բոլոր ձորակները, կարմրին տվող մասրենու թփերը: Աշուն էր, տերևաթափով, արևի նվազ ջերմությամբ, դառնաշունչ քամիով, որ ծառերի ճղներից պոկում էր դեղնած տերևները, խմբերով քշում, տանում հեռու ձորերը: Նույնիսկ քարափի հաստաբուն կաղնին խոնարհվում էր քամու առաջ: Ամայի ձորերում, դեղնակարմիր անտառի և հնձած արտերի վրա իջել էր մի պայծառ տխրություն: Ջինջ օդի սառնության մեջ զգացվում էր առաջին ձյունի շունչը: Այգում երիտասարդ կեռասենիները մրսում էին, քամուց խշշում: Սիմինդրի երկար տերևները թրերի նման քսվում էին իրար, պողպատի ձայն հանում: Կարծեսձավորներ էին արշավում իարր դեմ, և սիմինդրի տերևը, որպես բեկված սուսեր, ընկնում էր քամու առաջ: Արևի տակ ժպտում էր վերջին արևածաղիկը և օրորում դեղին գլուխը»: /5, էջ 72-73/ Այս պատկերն, իհարկե, աշնանային գեղեցիկ բնանկար է, որում խամրած են երբեմնի զվարթ գույներն ու ձայները, և մի տեսակ սպառնալից զգացվում է ձմռան շունչը: Բնանկարը և՛ իրական-առարկայական է, և՛ խորհրդանշանային: Բնապատկերի արտաքին կեղևի տակ ծածկագրված է հերոսի ճակատագիրը: Այս ծածկագրի բանալին է պայծառ տխրություն արտահայտությունը: Պատումին զուգընթաց արտահայտության բառերից յուրաքանչյուրն իմաստային առումով «աճումէ»՝ իր շուրջ հավաքելով նաև այլ բառեր.

պայծառ-մաքուր, պարզ, ջերմություն, հաստաբուն կաղնի, երիտասարդ, կարմրին տալ, կապտավուն, ժպտալ, արևածաղիկ:

տխրություն-տերևաթափ, նվազ, դեղնած, խոնարհվել, մրսել, բեկվել, դառնաշունչ, սառնություն, ձյան շունչ: Կյանքի մայրամուտին Դիլանն այսպես է ընկալում իր ապրած կյանքը, և բոցկլտացող օրվա վերապրում-տեսիլքը՝ իբրև զորեղ սկիզբ, լուսավորում է ոչ միայն ներկա պահը, այլև իր շողքն է նետում տասնամյակների տխրություն՝ հիշողության խավար անդունդի վրա՝ վերջին անգամ ու խոր իմաստավորելով անցած ճանապարհը:

Անհնար է խոսել Բակունցի գրելաոճի կամ գեղարվեստական պատկերման առանձնահատկությունների մասին և չանդրադառնալ գրողի երկերում վերհուշի գրական հնարանքի օգտագործմանը: Վերհուշը գեղարվեստական գրականության մեջ գրական հնարանքի արժեք է ստացել և մեծ դեր է կատարել ոչ քիչ գրական երկերի ստեղծման

գործում: Համաշխարհային դասական ու ժամանակակից գրականության մի շարք առաջնակարգ ստեղծագործություններ կառուցված են վերհուշի վրա, շատ գործեր հույզ ու կենդանություն են ստացել այդ հնարանքի հմուտ օգտագործման շնորհիվ: Հայ գրականության մեջ ոչ մի գրող այնքան չի օգտագործել վերհուշի գրական հնարանքն իր ստեղծագործության մեջ, որքան Ակսել Բակունցը: Նրա պատմվածքներից շատերն ամբողջությամբ այդ հնարանքի վրա են կառուցված («Միրհավ», «Խոնարհ աղջիկը», «Բրուտի տղան», «Նամակ ռուսաց թագավորին»,«Ծիրանի փողը», «Լառ-Մարգարը» և այլն), իսկ վերհուշի տարրեր կարելի է հանդիպելգրեթե բոլոր գործերում:

Վերհուշն առհասարակ հուզիչ երևույթ է: Մարդը հուզվում է, երբ վերհիշում է իր անցյալի այս կամ այն դեպքը, դրվագը կամ հարազատ ու սիրելի մարդկանց, որ հիմա իր կողքին չեն: Գրեթե միշտ վերհուշը թախիծով է լցնում մարդու հոգին, տխրեցնում նրան: Վերհուշի գրական հնարանքի շնորհիվ հուզաթաթավ են դառնում բակունցյան պատմվածքները: Ռ. Իշխանյանն այդ մասին գրում է. «Ամենից հավանական է այն, որ նախապես Բակունցը վերհուշն օգտագործել է ոչ թե կանխամտածված, այլ ինքնաբերաբար, իր գրական խառնվածքի թելադրանքով: Իսկ հետագայում նա պետք է, որ նկատած լինի, թե որքան հաջող է ինքն օգտագործում գրելու այդ եղանակը և որ ամենից ավելի լավ ընդունվում են վերհուշի վրա կառուցված իր ստեղծագործությունները, որոնք ամենից ավելի քնարական և անմիջական են ստացվում: Այնուհետև, գրողը կարող էր այդ հնարանքին դիմել և նախնական որոշմամբ, և իր՝ գրողի ներքնազգացողության մղումով»: /10, էջ 312/

Եթե «Միրհավ» պատմվածքում Դիլան դային հիշում է իր համար թանկ ու գեղեցիկ անցյալը, ապա Լառ-Մարգարը համանուն պատմվածքում անընդհատվերհիշում է անցած դաժան օրերը: Այս պատմվածքում ներկան և անցյալը պարբերաբար շարունակում են իրար, այսինքն՝ ներկան անընդհատ ընդմիջվում է անցյալի հուշերով: Հիմա Լառ-Մարգարը գյուղի ջրվորն է՝ աշխատասեր ու արդար, որին հեղինակը պատկերել է խոսուն պատկերներով.«Նրա համար ամենից մեծ հաճույքը այգին ու արտերը ջրելն էր: Երբ բոբիկ, արևից խանձված ոտքերով քայլում էր առվի եզերքով, բահով ճումերը առվից դեն գցում, որ ջրի հոսանքը սահուն լինի,-Լառ-Մարգարին այնպես էր թվում, թե ջրի պապակ արտերն ու ծարավ այգիները տապ արած իրեն են սպասում»: /5, էջ 127/«Արևից խանձված դեմքի վրա սրածայր քիթը երկար կտուցի էր համեմատ, եթե սպիտակած

բեղերը չլինեին»: /5, էջ 128/ «Լուսնյակ գիշերներին, երբ գյուղը քնած էր բեզարած մրափով, հովը սառնություն էր բերում ցերեկվա շոգից խանձված դաշտերին, լուսնյակ գիշերներին, երբ բարդու վրա իր բնի մեջ հանգստանում է արագիլը, որ լուսաբացին լառ-լառ թևերը փռած իջնիճահճուտի վրա,- Լառ- Մարգարը մինչև լուսաբաց աշխատում էր»: /5,էջ 129/

«Տարիներ անցան: Մի տեղ չգտավ Մարգարը, որ շունչ առներ: Հեղեղի բերանն ընկած մրջյունի պես վեր ու վար էր անում, մագլցում մի ծղոտի վրա, բայց հեղեղը ծղոտն էլ էր քշում, մրջյունին էլ: Մարգարն աշխատում էր, զրկում իրեն և բերանի պատառը պահում Թորոսիկի համար, որ պապի թևի տակ մեծանում էր»: /5, էջ 133/

«Լառ-Մարգարի փոքրիկ ջրակալած աչքերում փայլատակում էր մի մեծ հրճվանք, մանավանդ, երբ գարնան ջրտուքին առվի բանդը սարքելու համար դպրոցի մոտովն էր անցնում և ցեխապատի ճեղքից նայում, թե ինչպես դպրոցի բակում վազվզում են երեխաները, խաղում, կանչում, և երեխաների հետ խաղում է Թորոսիկը»: /5, էջ 134/ «Լառ-Մարգարը ոչ ոքի չասաց, թե ինչու արցունքներ երևացին աչքերին, երբ առաջին անգամ գնացքի պատուհանից Արարատի ձյունոտ գագաթը տեսավ: Այդ երկրում պիտի ծլեին ծիրանի կորիզները»: /5, էջ 134/ Այս բարի ու աշխատասեր մարդու հոգին պարբերաբար դառնանում էր անցյալի հուշերով: Հանգստանալու համար պառկում էր խոտերի մեջ և նայում լողացող ամպերին, իսկ միտքն ու հոգին թռչում էին դեպի իր կորցրած տունը, հիշում էր տեղահանության օրերը. «Սայլը ճռնչում էր օր ու գիշեր, փոշի կար ճանապարհին, շիվար դեմքեր…

-Մա՛րդ, թոնրին քարը մոռացա վրա դնել,- ասաց պառավը սայլի վրայից:

…Սայլը ճռնչում էր շաբաթներ, փոշին ճամփի վրա անպակաս էր գիշեր-ցերեկ:…Պառավի մազերի վրա ճամփի փոշին նստեղլ էր, մազերը դեղնել, աղտոտ գույն էին ստացել: Մարգարը տեսավ, որ աղետը կնոջ դեմքին նոր ակոսներ է ծրել»[53]: /5, էջ 130-131/

Այստեղ կրկին հեղինակը վերադառնում է պատումի ներկա ժամանակը. «Լառ-Մարգարը երբ «քեֆսըզ եմ» կասեր և ծիրանուտի տակ պառկած՝ ցերեկվա շոգին ծիրանի ճղների արանքով կնայեր երկնքի կապույտին, ամպի սպիտակ քուլային, որ ճերմակ լաթի պես մեկ սւզվում էր, մեկ էլ պռունկները հանում, թռչուններին, որոնք բարձրում պտույտներ էին անում և հազիվ երևում սև կետի չափ,- Լառ-Մարգարը մտաբերում էր

հարավի ավազուտները, շարվեշար վրաններ, վրանների վրա գունավոր լաթեր, որ տարագիրները բերել էին հեռավոր գյուղերից: Ավազուտի մեջ հատ ու կենտ ծառեր կային, որ Մարգարի աչքին մեծ ավելներ էին թվում՝ խրված ավազի մեջ»: /5, էջ 131/

Առանց հեղինակային միջարկության, առանց «հիշում է», «վերհիշում է» և նման այլ բառերի՝ Բակունցը պատումը շարունակում է՝ վերհուշը բերելով առաջին պլան: Ահա՝

«-Քար պիլա չկա, աս ու՞ր բերին մեզ,-գանգատվում էր Մարգարի կինը, որ ամեն իրիկուն իր տան բանալիներին նայելիս ափսոսում էր հավերին, տանը թողած իրերը»: /5, էջ 131/

Երբ վերհուշի զգացմունքային հոսքն անընդհատ խորանում է, գրողի խոսքը դառնում է առավել հուզական ու մտերմական: Քնարական վերապրումներ ներկայացնելով՝ Բակունցն ավելի շատ բան է հաղորդում, քան եթե ավելի մանրամասներ դիպաշարը կամ կերպարների բնութագիրը: Կարելի է վստահ ասել, որ Ակսել Բակունցի պատմվածքները շատ բանաստեղծական են: Սովորաբար համեմատելի չեն բանաստեղծությունն ու պատմվածքը, քանի որ ամեն տեսակ ունի նյութի գեղարվեստական պատկերման իր առանձնահատուկ սկզբունքները, այնուամենայնիվ, Բակունցի պատմվածքների դեպքում կարելի է նկատել տեսակների փոխներթափանցում և տարբեր տեսակների համադրությամբ ստեղծված նոր որակ:«Այս տեսակետից այն տպավորությունն է առաջանում, որ Բակունցի պատմվածքները կարծես արձակի փոքր տեսակի (պատմվածքի, նորավեպի, ակնարկի) և բանաստեղծության համադրություն լինեն»,/7, էջ 124/-գրում է գրականագետ Դ. Գասպարյանը:

Խոսելով Բակունցի պատմվածքների բանաստեղծականության մասին՝ Դ. Գասպարյանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ նաև արձակագրի խոսքի կշռույթին: Շատ ճիշտ նկատել և ընդգծել է, որ բանաստեղծական ներդաշնակության ինչ-որ մի շունչ ներքուստ կարգավորում և կշռույթավորում է Բակունցի խոսքը: Բակունցը գրում է կարճ և սեղմ արտահայտություններով, որոնք ստեղծում են շնչի շարժընթացային հավասարաչափություն: Գրականագետն այս մասին գրում է. «Ահա պատումի այս ներքին կշռույթը մեծապես ուժեղացնում է Բակունցի խոսքի բանաստեղծական ներդաշնակությունը: Այս կշռույթն առկա է նաև պատմվածքների կառուցվածքի մեջ, պատկերների ու առանձին դրվագների ներքին հերթագայության մեջ և այն մեծ ու հզոր ստեղծագործական շնչի մեջ, որը կառավարում է խոսքի ընթացքն ու բառերի

դասավորությունը: Արձակ խոսքի կշռույթին նպաստում են նաև առանձին բառերի, արտահայտությունների, պատկերային դարձվածների կրկնությունները, որոնցով հարուստ է Բակունցի խոսքը»: /7, էջ 127/

Պատկերների կրկնության գեղեցիկ օրինակներ կարելի է հանդեիպել Բակունցի շատ պատմվածքներում, օրինակ՝ «Ալպիական մանուշակ» կամ «Լառ-Մարգարը»: Այս պատմվածքներից առաջինում կրկնվում է հետևյալ նախադասությունը.

«Ծաղկափոշու մեջ թաթախված բզեզին մանուշակը ճոճք է թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան»: /7, էջ 135/

«Բուրմունքից արբեցած մի բզեզ քնել էր առէջների մեջ, և նրան այնպես էր թվում, թե աշխարհը հոտավետ բուրաստան է, ալպիական մանուշակ…»: /7, էջ 143/

Ինչպես վերը նշել ենք, այս պատմվածքում հեղինակը ներկայացնում է աշխարհընկալման տարբերությունները, իսկ այս կրկնվող պատկերը ստեղծում է աշխարհի հավերժության գաղափարը; «Լառ-Մարգարը» պատմվածքում կրկնվում է հետևյալ հատվածը.

«-Ծառդ պտուղ չի տար, յավրիս, գողության մի վարժեցուր:

Լառ-Մարգարի համոզումն էր այդ: Եվ երբ բարկանար, այդ խոսքը կասեր, իսկ եթե խոսքին կասկածող էր լինում, ավելացնում էր. -Էս հասակս քաշեր նո՞ր պիտի սուտ խոսիմ…»: /7, էջ 128,134/

Իհարկե, հասկանալի է, թե ինչու է կրկնվում այս պարբերությունը. չէ որ այն շատ տիպիկ է բնութագրում պատմվածքի գլխավոր հերոսին, որն այդքան դաժան ճակատագիր էր ունեցել, այդքան դառնություններ էր ճաշակել:

Ինչպես տեսնում ենք, իր բոլոր պատմվածքներում Բակունցը ստեղծել է գեղեցիկ և խոսուն պատկերներ, որոնք առանձնանում են արտահայտած գաղափարի հետ ունեցած արտակարգ ներդաշնակությամբ: Մեր ուսումնասիրության ընթացքում համոզվել ենք, որ բակունցյան պատմվածքներում հանդիպող յուրաքանչյուր միտք ու գաղափար անհնար է ավելի տիպիկ և պատկերավոր արտահայտել, քան դա հաջողվել է անել խոսքի վարպետ Ակսել Բակունցին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ակսել Բակունցն արվեստագետ գրող էր, որի գրական ժառանգությունը իր նրբությամբ, հայ մարդու, նրա հայրենիքի հանդեպ մտահոգություններով մնայուն ու բարձր տեղ է զբաղեցնում մեր գրականության մեջ: Նրա գրականությունը գալիս է բնաշխարհից թե՛ ձևով, թե՛ բովանդակությամբ: Նա պատկերում է իր բնաշխարհի պարզ ու անսեթևեթ կյանքը և բնաշխարհիկ մարդկանց ապրումներն ու խոհերը, նրանց առանձնահատուկ և միաժամանակ նրանցից յուրաքանչյուրին հատուկ հոգեբանությունը:

Իր հիասքանչ պատմվածքներում Ակսել Բակունցը պատկեր առ պատկեր ստեղծում է 20-րդ դարի սկզբի հայ գյուղաշխարհի մարդկանց հոգեբանական նկարագիրը: Զարգացման և փոփոխության մեջ տեսնելով կյանքն ու մարդկային նկարագրերը՝ նա բացահայտում է բազմաթիվ թաքնված ու սքողված նրբերանգներ՝ դրանով ընդարձակելով գրականության կենսական տարածությունները:

Բակունցը միշտ նախընտրել է նյութի ենթակայական վերարտադրությունը: Հեղինակային վերաբերմունքի ներկայությունը և պատումի ենթակայական բնույթը, որոնք ընթացք են ստանում հիշողությունների, վերհուշի, օրագրային գրառումների կամ այլևայլ ձևերով, ուժեղացնում են խոսքի բանաստեղծականությունն ու քնարականությունը՝ կառուցելով գեղարվեստական հրաշալի պատկերներ:

Ինչպես տեսնում ենք, Ակսել Բակունցին հաջողվում է պատկերի և գաղափարի կատարյալ ներդաշնակության հասնել առանց պատկերավորման ոճական միջոցների ու դարձույթների առատության և կուտակման:

Մեր համեստ ուսումնասիրության ընթացքում նկատել ենք և հատուկ ուշադրության ենք արժանացրել Ակսել Բակունցի արձակին բնորոշ նախադասությունների ներքին կառուցվածքն ու կշռույթը: Նախադասությունները հաճախ տրոհվում են հավասարաչափ միավորների և ստեղծում խոսքի ներքին կշռույթ, որը մեծապես ուժեղացնում է խոսքի բանաստեղծական ներդաշնակությունը: Ինչպես շատ ճիշտ նկատել է գրականագետ Դավիթ Գասպարյանը, թեև գրական ամեն տեսակ ունի գեղարվեստական պատկերման իր առանձնահատուկ սկզբունքները,

այնուամենայնիվ, Բակունցի փոքր արձակը թույլ է տալիս խոսել տեսակների փոխներթափանցման և դրանց համադրությամբ ստեղծված նոր որակի մասին: Այդ առումով Բակունցի պատմվածքները կարծես արձակի փոքր տեսակի(պատմվածք, ակնարկ, նորավեպ) և բանաստեղծության համադրություն լինեն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աթաբեկյան Ս.Ա., Ակսել Բակունց. Պատմվածքի վիպական աշխարհը, Երևանի համալս. հրատ., Երևան,1996, 306 էջ:
2. Աթաբեկյան Ս.Ա., Ակսել Բակունց. խոսքի ու… լռության պոեզիան, Երևանի համալս. հրատ., Երևան, 2000, 254 էջ:
3. Ակսել Բակունցը ժամանակակիցների հուշերում, Երևան, «Հրազդան-1», 1999,230 էջ:
4. Ավետիսյան Զ., Գրականության տեսություն, «Նաիրի» հրատ., Երևան, 1998, 224
5. էջ:
6. Բակունց Ա., Երկեր, (Կազմ.՝ Ա. Ս. Քիշոյան: Առաջաբանը՝ Ս.Բ. Աղաբաբյանի),Երևան, «Սովետական գրող», 1986, 672 էջ:
7. Բելինսկի Վ., Փիլիսոփայական ընտիր երկեր, հ.1, Հայպետհրատ, Երևան, 1954,456 էջ:
8. Գասպարյան Դ.Վ., Ակսել Բակունց: Կյանքը և ստեղծագործությունը, Երևան,
9. «Զանգակ-97», 2009, 544 էջ:
10. Գասպարյան Դ., Գասպարյան Մ., Գրականության տեսություն:Մեթոդական ձեռնարկ, Հեղինակային հրատարակություն, Երևան, 2012, 275 էջ:
11. Թամրազյան Հր.Ս., Սովետահայ գրականության պատմություն, «Լույս» հրատ., Երևան, 1984, 608 էջ:
12. Իշխանյան Ռ., Բակունցի կյանքն ու արվեստը, Երևան, «Հայաստան» հրատ., 1974, 330 էջ:
13. Ջրբաշյան Էդ., Գրականության տեսություն, Հայպետուսմանկհրատ, Երևան, 1962, 423 էջ:
14. Ռընե Ուելլեք, Օսթին Ուորրեն, Գրականության տեսություն, «Սարգիս Խաչենց-Փրինթինֆո», Երևան, 2008, 513 էջ:

1. ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

1. «Գրական թերթ», 1969, թիվ 25:

2. «Կանթեղ», 2001, թիվ 5:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. http://lraber.asj-oa.am/3713/

2. https://enlightngo.org/post/6877